բայց ափսոս, որ քարի կտորը չկարացինք դանել. թէ և մեր սպասաւորները՝ Յարութիւն Չիրակունին և Դանիէլ Մէլիք Փաշանեանցը և եղբօրս որդի Մկրտիչը ամեն ջանքով աշխատեցին և քրանեցին քարեր շրջելով և փորելով։

Ըստ աւանդութեան կողմանցս, Միխայէլ վարդապետին այս տեղ ծառի վրայ մեխելով՝ բեւեռելով նահատակել են Պարսիկները[1]։

2. Հնգար դիւղի մօտ մի քանի քարեր իրար մօտ դնելով չինել են օջախ «Փիրամատ» անունով, ուր վառում են խունկ ու մոմ, սրբատեղւ հին դերեզմանատան խիտ վայրի ծառերի մէջ է, և նայում է դէպի ընդարձակ դաշտը։

3. Բահլեւան դիւղի մօտ բլրակի գլխին ծառերի մէջ քանի քարերից բազկացած սրբատեղին «նահատակ» անուամբ որ նայում է Ագի (գառն) ձորի վրայ։

4. Աւանաշէն դիւղի մօտ Թարչիս անունով ուխտատեղին մի վայելուչ տեսարանով բարձրահայեաց տեղ, որ նայում է դէպի Փիրդիմանի գետը և լայնատարած դաշտը, բայց ափսոս որ մի հնութիւն չկայ, շրջապատած է վայրենի խիտ ծառերով և ծառերի մէջ բաւական դերեզմանաքար։ Ուխտատեղը բազկացած լինելով քանի աննշան քարերից, որոց առաջին ուխտաւորք վառում էին խունկ ու մոմ. 1888 թուին, դերեզմանների մէջ գտինք 3-4 հին խաչքարեր, անգիր և անթուական, և կանգնել տուեցի ուխտատեղւոյ շրջապատն, որ ուխտաւորք գոնէ խաչքար տեսնեն և համբուրեն։

Խաչքարերի և դերեզմանների վրայ թէ և ամենեւին դիր ու թիւ չկայ, բայց խաչերի ձեւից և հնութիւնից երեւում է,

---

[1] Բայց ժամանակի պատմութիւնն ուրիշ բան է ա ում Մխոյ վարդապետի համար, զօր. Զաքարիա սարկաւագ պատմիչ գրէ. «ի նմին ժամանակի յամի Տեառն 1610 եկն ի Քանաքեռ Մխոյ վարդապետ կոչեցեալ մոլորեցուցիչն Ուտիացի, որ և հալածական եղեւ ի Խանէն և ի Կաթուղիկոսէն»։ Երեւի Օչականայ Աբդար Գաւթի նման մագ չոր հագնելով սկսել է խափել և մոլորեցնել ժողովրդին, տես և Ա յրարատեան Ալիշանի 1890 յերես 295։ Գուցէ Ագուանցի Կաւնծիկ արեգայի աղանդն է ունեցել Մխոյ վարդապետը։ Տես Արիստակես Լաստիվերցցու պատմութիւնը. Գլ. ԻԳ. յերես 154։